նոքա յետս, քանզի բազմաց հանեալ էր զմի ակն, և ոմանց հատեալ զունջն և զականջն։ Թէպէտեւ գրեցին երկիցս գիր աղաչանաց, այլ քահանայն ոչ կարաց մատուցանել զայնս, այլ ստիպէր հասուցանել զդրամն, զի ծածկաբար առեալ էր անթերի 'ի Լատինաց։ Ուստի յակամայ կամս պատրաստեցին Հայք 114,000 դահեկան, նոյնչափ և Յոյնք, և առաքեցին յԱքքէ 'ի ձեռն Գաբրիէլ և Մեսրոպանոս վարդապետաց. իբրեւ ազդ արարին զժամանել դանձուն, եւ խմացեալ ճէղար զամբողջութիւնն, լուաց. զի այն ինչ դարձեալ էր 'ի պատերազմէ 'ի կողմանց Սամարիոյ և այլոց, և նոքա յետ հատուցանելոյ զդրամս դարձան յետս։ Խռովութիւն յեգիպտոս յերեսաց Բեօլէմէն կոչեցելոց, խեղդամահ լինելն եղբօր Եղիսաբեթ տիկնոջ, որոյ անուն կոչէին Մուստաֆա քեահեայ, որպէս գրէ զայս Տեսուչ վարդապետ տեղւոյն։

Քաղաքապետն Երուսաղէմի եղեալ էր 'ի բանտի զոմն 'ի բնակչաց գեղջ Յովհաննու Մննդեան վասն չհատուցանելոյ զհարկն. զայրացեալ ընդ այս գիւղականաց զհետ էին գործել չարիս՝ ուխտաւորք Հայոց ըստ ազգարարութեան Պատրիարգին չելանէին արտաքս քան զքաղաքն։

Իսկ Յունաց ծաղր արարեալ զնովաւ առաքեցին 'ի Բեթղեհէմ զ50 ուխտաւորս, և 'ի դառնալ նոցա անտի, ընդառաջ ելին գիւղականք 'ի դաշտի անդ մերձ 'ի գիւղն Յուդայի, և կալեալ զարս և զկանայս մերկացուցին, և զոմանս դան հարեալ վիրաւորեցին, ապա որոշեցին 'ի նոցանէ զարս 18 եւ վարեցին զնոսա 'ի գիւղն իւրեանց։ Յոյնք աճապարեալ ետուն արձակել զկալանաւոր նոցին, բայց նոքա յետ երկուց աւուրց արձակեցին զուխտաւորս, այլ զաւարն զորս կողոպտեցին, ոչ կամեցան տալ։ Յոյնք եւ ուխտաւորք նոցին հանդիպեցան Վնասուց յերեսաց անիշխանութեան քաղաքին (1803. Դեկտեմբեր)։

Միաբանք Յունաց գրգռեալ 'ի փոքր չիոթութենէ եղելոյ յեկեղեցին Ս. Աստուածածնի, որպէս գրեցաք, ծածկեցին առ ժամն զխորհուրդս իւրեանց, եւ 'ի վերին երես բարեկամ ցուցանէին զինքեանս Հայոց, արք եղբարք եմք ասելով, և այսպէս ընդարմացուցեալ զնոսա, դտին պատեհ ժամանակ՝ և բանս եդին ընդ ազգայինս իւրեանց